«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Առարկան՝ պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Քոսյան

Ուսումնական հաստատություն՝ Խ. Սամուելյանի անվան թիվ 47 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Ինչպիսի համագործակցային մեթոդներ կան Մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված

Բովանդակություն

Ներածություն .....էջ 4

Գլուխ 1. Համատեղ դասավանդման արդյունավետությունը .....էջ 6

Գլուխ 2.Գլուխ 2. Փորձի փոխանակում……էջ 10

Գլուխ 3. Առարկայական մեթոդական միավորման դերը ուսուցիչների համագործակցության գործում ……էջ 13

Եզրակացություն.....էջ 16

Գրականության ցանկ.....էջ 18

Ներածություն

Ժամանակակի պահանջին համապատասխան ուսուցչին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ուսուցչի համար առաջնային են նրա անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:

Այսօրվա դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժի, ով իր մասնագիտական որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Այս հրամայականն իր հետ բերել է նոր, ժամանակի պահանջներին համապատասխան որակի կրթություն ունենալու ձգտումը: Սակայն բազմաթիվ փաստեր վկայում են, որ ուսուցչի ինքնակրթությունը բավարար չէ, որպեսզի վերջինս համապատասխանի կրթական նոր պահանջներին: Եվ այս խնդրում վստահաբար կարող ենք ասել, որ ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրի վերաբերյալ: Ուստի այստեղ լայն կիրառելի է սովորել սովորեցնելով բանաձևը: Եվ փորձառու ուսուցչից սովորելու և դասն ավելի արդյունավետ դարձնելու շատ բան ունի վերցնելու սկսնակ ուսուցիչը: Եվ փաստորեն օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցիչները համագործակցությունը, օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն:

Հետազոտության նպատակը. Հետազոտական աշխատանքում փորձ է արվելու վերլուծել, կարևորել ուսուցիչների համագործակցության արդյունքում մասնագիտական արդյունավետության բարձրացումը, գործընկերների փորձի փոխանակման կարևորություն ու դրական լուծումը: Կարևորելով այն հանգամանքը, որ օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն:

Հետազոտության արդիականություն. Թեմայի արդիականությունը հանդիսանում է նրանում, որ կրթական բարեփոխումների հիմնական նպատակն է ունենա այնպիսի մանկավարժներ, որոնք կարողանան հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Այդ թվում է նաև մեր ուսումնասիրության նյութը՝ համագործակցությունն ու փորձի փոխանկումը:

Գլուխ 1. Համատեղ դասավանդման արդյունավետությունը

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների որակյալ ուսուցման և աջակցության տրամադրման համար պատասխանատու են դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմը և ծնողները: Ուսուցչի օգնականները, լինելով մանկավարժահոգեբանական աջակցության թիմի լիարժեք անդամներ, պետք է մասնակցեն բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հետևողական լինեն յուրաքանչյուր սովորողի մոտ որոշակի հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Յուրաքանչյուր դպրոցի զարգացման համար կարևոր է համագործակցությունը ուսուցչի և գործընկերների միջև, որն ինքնանպատակ չէ. այն ուղղված է ինչպես ուսուցիչների ինքնազարգացմանը, այնպես էլ սովորողների մտավոր ու զգայական կարողությունների, ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեր աշխատանքում փորձելու ենք դիտարկել միայն ներքին համագործակցության ձևերը:

Ներքին գործընկերներ են դիտարկվում համապատասխան դպրոցի ուսուցիչները, մասնավորապես տարրական դասարանների դասվարները, ուսուցչի օգնականները, կերպարվեստի, տեխնոլոգիայի և պարի ուսուցիչները: Տարրական դասարանների դասվարների հետ համատեղ յուրաքանչյուր կիսամյակում պլանավորել որևէ առարկայի մասով թեմատիկ ուսուցման հիմնական տարրերը, նախապես պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների օգտագործումը, մշակել աշխատանքային ժամանակացույց պլանավորման մատյանում:

ՀՀ կրթության ժամանակակից համակարգում կարևորվում է ուսուցչի օգնականներնի գործունեության ներդրմանը, որոնք սկսել են ծավալել 2014 թվականից: ՀՀ-ում «ուսուցչի օգնական» հասկացությունը մեկնաբանվում է որպես կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական

աշխատող: Սա համագործակցության շատ արդյունավետ ձև է, հատկապես հատուկ կարիք ունեցող աշակերտների հետ աշխտանքում և ոչ միայն[1]:

Ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին.

- դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:
- Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:
- Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը
- Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:
- Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Լավագույն ուսուցչի օգնականը պետք է ունենա անձնային և մասնագիտական այնպիսի որակներ, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ իրականացնել իր աշխատանքային գործունեությունը: Ուսուցչի օգնականի և ուսուցչի համատեղ աշխատանքը լավագույն համագործակցություն է աշակերտների ուսուցման բարձրացման համար:

Ուսուցչի օգնականների գործառույթների շրջանակն առավել հստակ է դառնում ուսուցման նոր ռազմավարության՝ համատեղ դասավանդման

[1] Մեթոդական ուղեցույց (ուսուցչի օգնականների համար), Եր. , 2022,էջ 5:

կիրառման դեպքում, որը կտրուկ հակադրվում է սովորողների ուսուցման ավանդական մոդելին: Համագործակցությունը ուսուցչի հետ խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում): Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում[2]:

Համատեղ դասավանդման հիմնական բաղադրիչն առնվազն 2 դասավանդող մասնագետների համագործակցված աշխատանքն է, որը ներառում է սովորողների բազմազանություն, դասի պլանավորում, համատեղ դասավանդում, գնահատում՝ ամբողջ դասաժամի օպտիմալ կիրառմամբ: Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ծրագրային նյութի յուրացման ավելի մեծ հնարավորությունների ընձեռում և այլն[3]:

Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար.

- սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,
- ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,
- մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում,
- առաջադիմության ապահովում,

[2] Մեթոդական ուղեցույց (ուսուցչի օգնականների համար), Եր. , 2022,էջ 17:
[3] Նույն տեղում:

• անհատական կարիքների և անհրաժեշտ հարմարեցված միջավայրի ապահովում:

Այսպիսով համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում: Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա:

Գլուխ 2. Փորձի փոխանակում

Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ քաղաքացիության հետ, և հետազոտել դրանց սոցիալական ծառայությունը, ժամանակակից մշակույթի հետ դրանց փոխհարաբերությունը, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, քաջատեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները:

Եթե ուսուցիչն ունի կոնցեպցիաների և սկզբունքների մասին միայն սահմանափակ գիտելիքներ, դժվար թե նա ցանկանա աշակերտներին ներգրավել ժողովրդավարական քաղաքացիության բարդ հայեցակետերում և ավելի հավանական է, որ կդասավանդի դիդակտիկ եղանակով՝ կանխելով աշակերտների մասնակցությունը և հարցադրումները, ինչով կսահմանափակվեն սովորողների փորձառության զարգացման հնարավորությունը: Հենց այստեղ է ծագում անհրաժեշտություն, որ դպրոցում ավելի կայացած ու փորձառու ուսուցիչները ամեն կերպ փորձեն նեցուկ լինել սկսնակ կամ ոչ փորձառու ուսուցիչներին՝ կիսվելով վերջիններիս հետ իրեն մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի կառավարման փորձառությամբ: Իհարկե, ուսուցիչների հիմնական մասը տիրապետում է իր գործառույթների հիմնական շրջանակին, այդ թվում՝ դասի ընթացքում բովանդակության և

նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով: Այնուամենայնիվ, դա բավական չէ ուսուցման գործընթացն արդյունավետ ու ստացված համարելու համար: Ուսուցիչը պետք է կարողանա հստակ ներկայացնել մի շարք հիմնական գաղափարների շուրջ իր տեսլականը, ունենա համապատասխան առարկայական բառապաշար, կարողանա կիրառել գործուն հարցադրումներ, որոնք համապատասխանում են դասի ուղղվածությանը:

Ինչպես նշել էինք, ուսուցիչների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը կարելի է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս առումով կարևոր ենք համարում նորարար ու նախաձեռնող ուսուցիչների դերը: Վերջիններս պետք է բաց լինեն համագործակցության համար, փորձեն ուղղորդել պակաս փորձառու կադրերին: Մանկավարժական աշխատողն իրավունք ունի համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[4]:

Փորձի փոխանակման տեսանկյունից կարևորվում է նաև փոխադարձ դասալսումների իրականացումը ներքին գործընկերների հետ, որը կարելի է իրականացնել ձևավորող և թիրախային մեթոդներով: Անհրաժեշտ է դասալսումներն իրականացնել նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան, հետևյալ հաջորդականությամբ.

- Քննարկում՝ թիրախային խմբի/դասարանի որոշում,
- Բուն դասալսում,
- Դասալսման թերթիկի լրացում,
- Ինքնակատարողականի լրացում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել դասավանդման մեթոդներին, դասարանի կառավարման խնդիրներին, նաև հատուկ կարիքներ ունեցող սովորողների ներգրավմանը դասապրոցեսին: Ինքնակատարողականը քննարկել համատեղ և վեր հանել խնդիրները: Եվ այդ հարցում ուսուցչին անմիջական օգնում է ուսուցչի օգնականը:

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

Գլուխ 3. Առարկայական մեթոդական միավորման դերը ուսուցիչների համագործակցության գործում

Մեթոդական միավորումները/առարկայական մասնախմբեր/ ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են, որոնք իրականացնում են ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում:

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին համարվող առարկայական մեթոդական միավորման ներսում, որտեղ ուսուցիչն ունի անսահմանափակ հնարավորություններ սեփական մասնագիտական պահանջմունքները բավարարելու համար: Մեթոդական միավորումները/առարկայական մասնախմբեր/ ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են, որոնք իրականացնում են ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում:

Ստացվում է, որ մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ[5]:

Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ մի հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրություններում: Կրթության որակ սահմանելով օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են՝ չնայած նրանք հիմնականում փորձում են դրանք համապատասխանեցնել ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը[6]:

Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, մանկավարժն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար: Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը:

Ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը ևս խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին կարող են իրենց փորձով օրինակ դառնալ մյուս գործընկերների համար: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և

[6] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf, էջ 4:

միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Եվ այս մոդուլները կարելի է օգտագործել առարկայական մեթոդական միավորումների շրջանակերում:

Առարկայական մեթոդական միավորման շրջանակներում իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը:

Այսպիսով. Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում շատ կարևոր է մանկավարժական աշխատողների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, ինչը կարող է ստեղծել գործընկերային ու համագործակցային առողջ միջավայր: Վստահաբար կարող ենք ասել, որ նման պարագայում աշխատանքը դպրոցում կլինի էլ ավելի համակարգված ու արդյունավետ՝գործունեության հիմքում դնելով սովորողների որակյալ ու ժամանակակից կրթություն ստանալու իրավունքը:

Եզրակացություն

Յուրաքանչյուր պետության զարգացման համար կարևոր նշանակություն ունի կրթված հասարակութուն ունենալը: Կրթված հասարակության արմատներն գալիս են դպրոցից: Ուսուցիչն իր կարևոր և ուրույն տեղն ունի այս գործում: Այժմ քան երբևէ ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական ինքնակրթության, ինքնուրույնության զարգացման վրա: Հետևաբար ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների հենքն է: Ուստի դպրոցի համար կարևոր է կարողունակ ուսուցիչ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Այս ամենին հասնելու համար հարկավոր է հարթակներ, որոնցից օգտվելով ուսուցիչը գտնվում է միշտ բարձր մակարդակի վրա: Այս գործում կարևոր է ուսուցիչների համագործակցության ու փորձի փոխանակման կարևորությունը դպրոցում, նշենք նաև, որ անչափ կարևոր է, որպեսզի ուսուցիչը չկաշկանդվի համագործակցության կամ փորձի փոխամակման ժամանակ: Այս գործընթացում անչափ կարևոր է նաև փոխադարձ դասալսումների դերն ու ուսուցչի աշխատանքը դպրոցի առարկայական մասնախմբերում: Բայց նախ և առաջ դպրոցում

շատ կարևոր է մանկավարժական աշխատողների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, ինչը կարող է ստեղծել գործընկերային ու համագործակցային առողջ միջավայր: Վստահաբար կարող ենք ասել, որ նման պարագայում աշխատանքը դպրոցում կլինի էլ ավելի համակարգված ու արդյունավետ՝գործունեության հիմքում դնելով սովորողների որակյալ ու ժամանակակից կրթություն ստանալու իրավունքը:

Այս գործում կարևոր է նաև ուսուցման նոր մոդելը՝ համատեղ դասավանդը: Որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում:

Այսպիսով, ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ ուսման որակը ավելի բարելավելու և արդյունավետ դարձնելու կարևոր գործոններից մեկն է:

Գրականության ցանկ

https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀհանրակրթության մասին օրենք

http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf,

Մեթոդական ուղեցույց (ուսուցչի օգնականների համար), Եր., 2022: